



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15244

15-ամսի
միջոց

891.99

Ը-66

Քիֆու

1290

№ 1

ՇԻՐՎԱՆՁԱԴԷ

142
ՏԵՍՆՈՒՆԻՆԳ ՏԵՐԻ ԱՆՑԱԾ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ „ԱՐՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

Գոյովի՛ւ. պր. և Ռարկատի՛ւ. փող. տակի՛սն:

1890

3373

89199


Շ-66

u. u.

ՇԻՐՎԱՆՁԱՐԷ

ՏԱՍՆՈՒՀԻՆԳ ՏԱՐԻ

Ա Ն Ա Ա Ծ



2003

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

Զօրօգին. պր. և Տարեառին. փող. սովորած:

1890

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊՂԱՑ ՔՆԻԿՆԻՍԱՆՑ

Ծ Ք Ա Յ Ի Ք



Дозволено цензурою, Ставрополь, 1890 г. 5-го нояб
Тип. Ароръ, Т. И. Назарьянъ, уг. Гол. пр. и Баряти. у

340
41

0081

... արդարև զից հետեւեալս յայտնարեալ զի ինչպէս
... արդարև զից հետեւեալս յայտնարեալ զի ինչպէս

Քրիստոսը զայլու եւ զայլու զայլու զայլու զայլու
Սմբոյր միահամուռ սոքի կանգնեց,
խուլ շնջիւնները ընդ հատվեցին, և ծայրէ
ի ծայր լիքը դահլիճում թագաւորեց լու-
թիւն:
Պահալան զինորները տւելի մօտի-
կացան վանդակապատին, որի ետեւում
կանգնած էր օրուայ տխուր հերոսը: Նրա
ոտներն ու ձեռները շղթայած էին: Նա
գեռ պատանեկական հասակումն էր, բա-
րակ, նորաբոյս ընչացքը հազիւ հազ ծած-
կում էր նրա վերին շուրթը. նա գեղե-
ցիկ էր, թուխ աչքերով, փոքրիկ ձեռնե-
րով և բաւական նուրբ կազմուածքով:

Նրա երեսի զծագրութիւնը չէր արտայայտում եղեռնագործի հոգի:

Առաջ ներս մտաւ նախագահը, յետոյ քննիչ անդամները, յետոյ դատախազը, յետոյ քարտուղարները: Նրանց դէմքերը սառն էին, անտարբեր և, միևնոյն ժամանակ, ահարկու հարիւրաւոր ամբոխի համար:

Յանցաւորը իւր հայեացքը յառեց դէպի այն կողմ, և մի րոպէ չ'անցած լսվեց նախագահի անյողզող ձայնը.

— Բագուի նահանգական դատարանի քրէական բաժինը Գրիգոր Խանգազեանցին, մեղադրելով Սէյիդ-Սզիմի որդի Ղուրբան Ալիի սպանութեան համար, դատապարտեց . . .

Յանցաւորը մի ցնցումն գործեց, նրբա ձեռների շղթան մի թեթև շաչիւն արձակեց: Ամբոխը, ինչպէս մի անձնաւորութիւն, զսպեց իւր շնչառութիւնը:

— Դատապարտեց՝ զրկել բոլոր անհատական և ստացական իրաւունքներից,

ենթարկել տաժանակիր աշխատանքի Տոմսկի նահանգի գաւառներից մէկում տասը ու երկու տարի ժամանակով, այնուհետև յաւիտենական բնակութեան Ռուսիայի հեռաւոր նահանգներում:

Մինչ թարգմանը այս խօսքերը կրկնում էր յանցաւորին, գահիճի մի անկիւնից լսվեց կանացի մի սուր ճիչ:

Յանցաւորը ոչինչ չը պատասխանեց նախագահի հարցին, թէ արդեօք զոհ է այդ վճռով:

Պահապանները բաց արին վանդակապատը, և նա թուլացած, սալըդնած ցած իջաւ սանդուղքով: Նրա դողդոջուն ոտը գահիճի յատակին չը հասած, կահանելով առաջ վագեց և նրա սլարանոցին փաթաթվեց ասիական հագուստով մի կին:

Իս դատապարտվածի հարազատ մայրն էր, որ իւր թևերի տակ գգուելով սնել ու մեծացրել էր նրան տասնուհինը տարի, մինչև այն ժամանակ, երբ որդին բոլորովին անձնատուր եղաւ կեանքի մո-

լուծիւններին: Եւ երկու տարի չանցած՝
 երկրորդ տարիածուն ձգեց նրան փոր-
 ձուծեան մէջ: Եւ անմահ զարգացիւ յայն-
 յայտ: Ա՛յ ամբոխի խնդիրքը, ո՛չ ստիկան-
 ների խօսքը, ո՛չ սուխնների սպառնալիքը
 չը կարողացան մօրը բաժանել իւր անդ-
 բանիկ որդուց: Նա խղճալի էր, բայց շա-
 տերը աւելի խղճում էին երիտասարդ դա-
 տապարտավածին: Ա՛վ չէր ճանաչում նրան
 Ն. քաղաքում, որ մայրը չէր նախանձել
 նրա մօրը, որ աղջիկը տասն անգամ չէր
 գիտել նրան դռների ետեւից, ասիական
 համեստութեան և ամօթխածութեան
 թանձր քօղի—շալի տակից, երբ սիրուն
 տղան անցնում էր փողոցով, գլուխը բար-
 ձըր պահած, գրակը անփույթ կերպով ձախ
 ականջի կողմը թեքած, կուրծքը դուրս
 ցցած, ճակատը բաց, դէմքը լանդուզն,
 կրակոտ: Եւ նա, շատերի նախանձի այդ
 առարկան, լանկարծ զոհ դարձաւ իւր մօ-
 լի կրքերին, հասարակական ստոր խաւի
 ծնունդ մի անառակ թրքուհու ոտքի տակ

դնելով ծնողների նամուսը և իւր ծաղիկ
 կեանքը: Եւ այժմ հիշման մանամայնի զոյւն
 դարձերբ Անթառամը ուշքի եկաւ, իւր
 շուրջը կանգնած տեսաւ միայն մերձաւոր
 ազգականներին: Նա անզգայաբար թոյլ
 տուեց, որ իրան կառք նստեցնեն և տա-
 նեն: Նա կըզնայ դատաւորների մօտ, կ'ա-
 դերսի, որ վճիռը փոխեն, եթէ չեղաւ՝
 նա կըդիմէ աւելի բարձր դատաւորներին:
 Նա մինչև անգամ ոսաբաց, գլխաբաց կը
 գնայ Թագաւոր կայսեր մօտ, կընզնի նրա
 օտներին: Նա բարի է, նա չի թոյլ տալ,
 որ մի մայր զրկուի իւր որդուց, և այն
 էլ ինչ որդուց

— Տասներկու տարի, տասներկու տա-
 րի, անխիղճ մարդիկ

— Եւ այժմ

Մարտ ամսի վերջն էր, Վօլգա գե-
 տի ստորին մասերի սառույցն արդէն կո-
 տրվել էր և Բագուի ու Ռուսիայի մէջ
 նաւագնացութիւնը սկսուել:

Եղանակը բաւական ցուրտ էր. մանրը, փոշիանման անձրև էր գալիս, ծովը խաղաղ էր, միայն նրա հեռավոր հորիզոնը ծածկված էր մոխրագոյն թանձր մշուշով: Փորձառու մարդիկ հաւատացնում էին, թէ խորքում, ավերից շատ հեռու, փոթորիկ կայ: Իսկ Կասպիյ շոգենաւի անդուզն նաւապետը արհամարհում էր թէ բնութեան սպառնալիքը և թէ մարդկանց խորհուրդները:

— Շապտեցէք, — հրամայում էր նա անվրդով ձայնով նաւաստիներին, — կէս ժամուց յետոյ պիտի խարխիւր հանենք: Բոլոր ապրանքները բարձուած են:

— Բարձուած են:

— Ո՛րտեղ են ճանապարհորդները:

Նաւապետը վերջին բառը արտասանեց հեզնական եղանակով:

— Ահա:

Նաւահանգիստի ծայրում հաւաքված էր միտեսակ մոխրագոյն կոպիտ վերարկուներ հաքած աքսորականների խումբը,

թւով տասն հոգի, շրջապատված կրկնապատիկ զինւորներով: Հացի կապոցները ձեռներին բռնած, թշուառները մաւրու խոշոր հայեացքով նայում էին ջրի անհուն տարածութեանը, որ այն օրուանից առ միշտ պիտի անջատէր նրանց հայրենիքից: Նրանք բոլորը օտար քաղաքներից էին բերված: Չը կար մէկը, որ արտասուքով կամ գէթ ցաւակցական հառաչանքներով ճանապարհ դնէր նրանց: Ո՛վ զիտէ, նահանգի որ գաւառում կամ որ զիւղումն էին այդ բոսփին ողբում նրանց մայրերն ու քոյրերը: Մտածում էին նրանք այդ մասին, թէ ոչ—Ստամբուլ էր յայտնի Երբեմն նրանց տիրում էր մի կատաղի զուարճութիւն: Նրանք միմեանց հրում էին, կատակներ էին անում, հրահրու ծիծաղում էին, կարծես, առաջիկայ ճանապարհորդութիւնը մի զուարճալի զբօսանք էր խոստանում նրանց: Բոլորն էլ աւազակներ էին, ով զիտէ, քանի անմեղների արիւնի մէջ թաթախած իրանց ձեռները:

Միայն մէկն էր բացառութիւն ներկայացնում այդ աքսորականների մէջ իւր հոգեկան դրութեամբ: Նա կանգնած էր խմբից մի փոքր հեռու, ամենից տեսքով և ամենից երիտասարդ: Զինւորների շրջ-
 թայակապ շարքի ետևում կանգնած էր նրա մայրը իւր մի քանի ազգականների հետ:

Երբ իւր բոլոր յոյսերից, գրկվեց, տեսնելով, որ աղի աղերսանքները ոչ ոքի վրայ չ'ազդեցին, Անթառամին մնում էր հաշտվել իւր վիճակի հետ: Երեք ամիս չ'անցած Գրիգորին դուրս բերին իւր ծըննդեան քաղաքից: Անթառամը հետևեց նրան մինչև Բագու: Եւ ահա, վերջին անգամն էր նա տեսնում իւր որդուն:

Գրիգորը աշխատում էր երևալ ուրախ, զուարթ և ճիգն էր թափում մըխիթարել իւր մօրը: Բայց նրա ամեն մի միխիթարական խօսքը կրկնապատկում էր Անթառամի տանջանքը:

Կուրծքը կիսով չափ բաց, աչքերը

արտասուքից ցամաքած, նա իւր հոգեկան վիշտը արտայայտում էր միայն գլխի տարօրինակ շարժումներով: Եւ այդ շարժումները աւելի ազդու էին, քան առաջուայ արտասուքը, հեկեկանքը և գոռումները: Նա ձգտում էր առաջ, ուզում էր մի անգամ ևս փաթաթվել իւր սիրեցեակի պարանոցին: Բայց բաւական է, զինւորական կարգապահութիւնը սրտի թոյլ զեղումներ չէ սիրում:

Սուկնների սպանակից շարքը մի անխորտակելի պատնէշ է մօր և որդու մէջ: Եւ որքան գեղեցիկ էր նա այն օրը իւր մօր աչքում, նորն իսկ աքսորականի տգեղ հագուստով, մի տարուայ հոգեկան և մարմնական գրկանքներից յետոյ:

Շոգենաւի սուլիչի առաձգական ձայնը լսվեց, Անթառամի աչքերը միջնեցին: Աքսորականներին հրամայեցին առաջ գրնալ, և մոխրագոյն խումբը անցաւ շոգենաւի տախտակամածի վրայ:

Բարակ անձրևը շարունակվում էր:

Ի՞նչ, նա, որ մեծացել է ծնողների խնամող յարկի տակ, գիշերը պիտի անցուցանի բաց օդում, ծովի անհուն տարածութեան մէջ, անձրևի ներքոյ: Ոչ երբէք, թողէք Անթառամին ծովը գցի իրան, խեղդուի, որ չը տեսնի որդուն այդ դրութեան հասած: Բայց ո՞վ կը թողնի և ինչո՞ւ. չէ՞ որ Աստուծո՞ւ ձեռքին ոչինչ անհնարին չը կայ և միթէ չէ՞ կարող նա ազատել Անթառամի որդուն:

Իսկ շոգենաւը մեղմիկ սահում էր և նաւահանգստից հեռանում: Անջատող պատնէշը այժմ ծովի խորութիւնն էր, այսինքն ինքը բնութիւնը:

Եւ սրբան արագ էր մեծանում այդ պատնէշը:

Ահա խարիսխը բարձրացաւ ծովի յատակից, շոգենաւը իւր կտուցը ծռեց գէպի հակառակ կողմը. աքտորականների մոխրագոյն գլխարկներն են միայն երևում: Մի կարմրագոյն լաթի կտոր այդ գլխարկ-

ներից վեր սաւառնում է օդի մէջ: Իս Գրիգորի վերջին բարևն է:

Չքացաւ կարմիր թաշկինակն ևս, և ամեն ինչ ձուլվեց, դարձաւ մի անորոշ սև գունդ, որից բարձրանում էր թանձր նաւթային ծուխը և սփռվում մուգ-կապտագոյն ծովի տատանվող մակերևույթի վրայ . . .

* *

Անցան առաջին ամիսները: Անթառամը արդէն վերադարձել էր իւր ծըննդեան քաղաքը, այնտեղ, ուր յանցանք էր գործել և ուր դատապարտվել էր յախտենական աքտորանքի նրա որդին:

Օր օրի վրայ նա սպասում էր նամակի: Առաջին նամակը ստացաւ միայն իննը ամիս անցած:

Գրիգորը նկարագրում էր նախ ծովային վտանգալից փոթորիկը, բացօդեայ կեանքը, յետոյ ընդարձակ Ռուսիայի լայնատարած դաշտերը, ցուրտը, անձրևներ-

ըր, ձիւնը, բուքը, մի խօսքով, բնութեան
 և մարդկութեան արհաւիրքը, որ կրել էր
 նա իւր հնգամսեայ ճանապարհորդու-
 թեան ընթացքում: Վերջապէս, նրանց
 բերել են աքսորատեղին: Իս մի փոքրիկ
 աւան է, քաղաքից հեռու: Այստեղ կան
 արքունական հանքեր և մի գործարան,
 ուր բոլոր աշխատաւորները աքսորական-
 ներ են: Ահա այս հանքերում և գործա-
 րանում պիտի աշխատի և Գրիգորը, ինչ-
 պէս մի բեռնակիր մշակ, միշտ և անդա-
 դար, ամբողջ ցերեկը, ստորերկրեայ մթին
 և խոնաւ հանքերում, առանց իրաւունքի
 գործարանի շրջապատից դուրս ոտք դնելու:

Տասն անգամ Անթառամը իւր երկրորդ
 որդուն ստիպեց այդ նամակը կարգալ,
 այն օրը, ինչպէս ասում էր ինքը,
 նա թաղում էր իւր որդուն: Նա հրաւի-
 րել էր բոլոր իւր մօտիկ ազգականուհի-
 ներին, որ իւր ցաւին ցաւակից լինին: Եւ
 այդ կանայք, փոխանակ մխիթարելու, ա-
 ւելի գրգռում էին նրա վիշտը իրանց

կեղծ և անկեղծ հառաչանքներով, իրանց
 կարեկցական դարձուածներով: Նամանա-
 ւանդ կեղեքվում էր նրա սիրտը, երբ այդ
 կանանցից իւրաքանչիւրը լիշեցնում էր
 Գրիգորի սիրուն կերպարանքը, հարաւա-
 լին բորբոքուն երեակայութեամբ նկարա-
 գրելով նրան կրկնակի գեղեցիկ գոյներով:

Յետագայ ձմեռը ստացվեց երկրորդ
 նամակը: Այս անգամ Գրիգորը մռայլ նը-
 կարագրութիւններ չէր անում: Երևում
 էր, որ նա արդէն սկսել է ընտելանալ աք-
 սորականի վիճակին, մխիթարում էր իւր
 մօրը, լիշեցնում էր, թէ Սիբիրն էլ մի
 մարդաբնակ աշխարհ է, թէ այնտեղ էլ
 մարդիկ ապրում են և այլն և այլն: Եւ
 իւր դրութիւնը աւելի թեթեւ ցոյց տալու
 համար, գիմում էր համետական նկարա-
 գրութիւնների իւր բաղդակիցների կեան-
 քից: Սասնաւորապէս նա գրում էր մի
 նախկին հայ պաշտօնեայի մասին, որ աք-
 սորված է քսան տարով իբր թէ կաշա-
 ուակերութեան և եղեռնագործներին, գո-

ղերին ու աւագակներին գաղտնի աջակցելու համար: Թէ ինչ է եղել այդ մարդը առաջ, Աստուած գիտէ, բայց, եօթ տարի աքսորականի կեանքի դառնութիւնները ճաշակելուց յետոյ, նա շատ մեղմ, բարե- սիրտ և խեղճ մարդ է:

— Էսպիսիներին տեսնելիս, սիրտս մխիթարվում է, — աւելացնում էր Գրիգորը իւր նամակում:


Տարին անցնում էր տարիի ետեւից, ժամանակը Անթառամին ևս ընտելացնում էր իւր վիճակին, հարկաւ, արտասուքը և լացը նրա կեանքի անհրաժեշտ պահանջը դարձնելով: Ամեն անգամ, որ նա լիշում էր (և երբ չէր լիշում) այն բոստան, երբ որդու կարմիր թաշկինակը սաւառնեց օդում, նրա կրծքից դուրս էր հնչում ծանր հոգոցը, և սղի կաթիլները, որդրում էին նրա նիհարած այտերը: Բայց

այդ լոկ մի դառն երազ էր համեմատութեամբ այն պատկերի, որ միշտ կանգնած էր Անթառամի աչքի մառջև, որ միշտ հալածում էր նրան:

Ահա նա, ուրախ, անհոգ գէմքով, բաց ճակատով, երիտասարդական հրով վառուած աչքերով: Որքան ուրախացնում էր Անթառամին որդու այդ կերպարանքը, որքան հպարտանում էր և զմայլվում, տեսնելով նրան ընկերների շրջանում բոլորից սիրուն, բոլորից կայտառ, բոլորից աշխույժ: Այն, ամբողջ թաղի մէջ չը կար մի ուրիշը նրա նման: Եւ այդ լոկ մայրական երեւակայութեան արգասիք չէր, այլ մասամբ և՛ իսկութիւն: Քանի քանի ազգական և ոչ ազգական կանայք ստիպել են Անթառամին՝ թալիսմաններ կապել Գրիգորի վզին, որ նա զերծ մնայ չար աչք կաշեւուց: Զօգնեցին նրան այդ թալիսմանները:

Արդեօք նոյնն է մնացել Գրիգորը Սիրիւում, թէ՛ փոխվել է. չէ՞ որ արդէն

340
41



անցել է եօթը տարի նրա աքսորվելուց։ Բայց Անթառամի երևակալութիւնը կենդանի պատկերացնում էր քսան ու իննը— երեսուն տարեկան Գրիգորին այնպէս, ինչպէս նա տեսել էր առաջ և ինչպէս անջնջելի դրօշմով էր նրա լիշողութեան մէջ, տակաւին պատանի, թարմ, քսան ու մէկ տարեկան Գրիգորին։ Յերեկը երևակալութեամբ, զիշերը երազում, միշտ և անգագար, այդ պատկերը կանգնած էր նրա աչքի առջև։

Եօթը տարի անցաւ, ուրեմն մնում է հինգ տարի։ Անթառամը համբերութիւն կունենայ հինգ տարի ևս կրել իւր վիշտը։ Նա օրեր և զիշերներ էր հաշուում, թէ երբ պիտի լրանայ որոշված ժամանակը, և երբ լիշում էր, որ տաժանակիր աշխատութիւնից ազատվելուց յետոյ ևս Գրիգորը չէ կարող վերագառնալ հայրենիք, խեղճ մայրը գլուխը թեքում էր կրծքին և անշարժ մնում։

Որդին աքսորվելուց յետոյ նա մի առ

ժամանակ Աստուծոց երես էր դարձրել, համոզված, որ նա անարգար վարուէց իւր հետ։ Բայց կարող էր նա երկար միջոց անհաշտ մնալ նրա հետ, որ մխիթարութեան և սիրտանքի անսպասելի աղբիւր է ամենայն տեսակ թշուառների համար։ Եւ ահա նա դարձեալ ամեն երեկոյ կանգնում էր եկեղեցու սիւներից մէկի ետևում, ձեռները բարձրացնում էր վերև, աչքերը չառում էր Աստուծամօր պատկերին և երկար, երկար ժամանակ անշարժ մնում միևնոյն դրութեան մէջ։ Յանուն մայրական սիրոյ, նա աղերսում էր Աստուծամօրը՝ միջնորդ լինել, որ Աստուծո նրան մի օր արժանացնի իւր որդու տեսութեանը։

— Ըր մեռնեմ, մի սնգամ էլ տեսնեմ։ Նրանց — կրկնում էր նա բիւր անգամ կրկնած մի և նոյն դարձուածը։

Այսպէս անցկացրեց Անթառամը տասնուերկու տարի, միշտ լուսավել, թէ պէտք է արժանանայ որդու տեսութեանը և միշտ ապրելով միմիայն այս յոյսով:

Վերջապէս, նա ստացաւ վաղուց սպասած լուրը: Երջանիկ օր, օր, երբ տասնուերկու տարուայ ընթացքում առաջին անգամ երեւցաւ ուրախութեան ժպիտը Անթառամի թառամած զէմքի վրայ: Գրիգորը ազատվել է տաժանակիր աշխատութիւնից, ազատվել է առաւօտից մինչև երեկոյ մթին և խոնաւ ստորերկրում աշխատելուց, ազատվել է եղեռնագործների, գողերի, աւազակների և կոպիտ զինուորականների հասարակութիւնից, նրանց հետ մի բնակարանում ապրելուց, մի ամանից ուտելուց, մի ամանից խմելուց, մի խօսքով, արտորականի կապանքներից:

Իսկ այժմ . . .

Ահա ինչ էր աւելացնում Գրիգորը իւր նամակի վերջում:

Հէնց որ ժամանակս վերջացաւ, կարճ մտադիր թուղթ տուաւ, ազատվեցի անիծված զժողովից, եկայ քաղաք: Հաց չունէի, շոր չունէի, համարեա տկոր, ստեցի խնջանեմ:

Եստեղ մէկ մարդ կայ քեարփուշի (աղիւսի) դաւող (գործարան) ունի, աղաչեցի, պաղատեցի, վայնաչարի տեղ տուաւ ինձ. ի հարկէ, նրա էլ խիղճը եկաւ ինձ, ինչու որ ինքն էլ առաջ ինձպէս կատրթնիկ (աքսորական) է եղել: Հիմա գոյութիւն Արարիչ Աստուծուն, ես արեկաշէնի (գործակատար) եմ ազաւօղում, ազաւխս մի կերպ պահում եմ, եթէ ինձանից հարցնես, ողջ, առողջ եմ, սիրելի ծնող, շատ էլ Ֆիքր մի անիլ: Մէկէլ, սուտ-ղորթ, ասում են, որ նոր թագաւորը թախտ (գահ) նստելու օրը մանրֆեսա (հրովարտակ) է դուրս բերել կատրթնիկների համար: Աստուած հաստատ պահի: Իսկը չեմ իմանում որ կատրթնիկների համար է թագաւորի ողորմութիւնը: Երեկ ընկերներիցս մէկը ասում

էր, ևս էլ յոյս Աստուծոյ, որ ազատվողների մէջ լինիմ: Կամանդիրին հարցրի, ասեց մանրօրէս մինչև օրս չի հասել, չեմ իմանում կայ, չը կայ: Էսպէս իմանաք: Հէնց որ հասաւ, իսկը կ'իմանամ, կը գրեմ: Գոհութիւն Աստուծոյ: Կրկին աղաչանքս է, որ շատ էլ սիրտդ չը մաշես, աղօթք անես մեղքերիս համար, ժամ գնաս, ջուխտջուխտ (գոյգ-գոյգ) մոմ վառես: Սիրելի մայր, Միխաբին, Թագուհին, Սէլրանին և այլ բարեկամաց ու հարցանողաց շատ շատ բարև: Յաւիտեանս յաւիտենից ամէն: Մնամ քեզ կարօտ, հարազատ որդի Գրիգոր Խանգաղեանց: Սակայն անցաւ մի տարի ու կէս ևս, և Գրիգորի յետագայ նամակների բովանդակութիւնը գրեթէ անփոփոխ էր մնում: Կայսերական մարդասէր հրովարտակը տակաւին սպասվում էր: Գրիգորը հարցնում էր սրան ու նրան, ոչ ոք մի որոշ պատասխան չէր տալիս: Բայց նա դարձեալ միեւ-

թարում էր մօրը, դարձեալ յոյս էր տալիս իւր վերադառնալու մասին:

Եւ Անթառամը անհամբեր սպասում էր. օրերը նրա համար անցնում էին անտանելի դանդաղութեամբ, մինչ կը լրանար այն ժամանակամիջոցը, որ տևում էր բնականաբար Գրիգորի մի նամակից յետոյ մինչև միւսի ստանալը: Ստացվում էր յաջորդ նամակը, և դարձեալ նոյն անորոշ բովանդակութեամբ:

*
*

Մի ամարալին օր, իրիկնորէմին, Անթառամը նստած գաւթում քառասուն ու երկու սեւացած ու չորացած սիսեռների վրայ գուշակում էր սպազան: Յանկարծ շնչասպառ ներս վազեց նրա երկրորդ որդին, Միխաբը, և ուրախ ուրախ գոչեց.

— Ի՛նչ կը տաս, որ ասեմ . . .
Անթառամը, չը նայելով իւր ձերութեանը, աշխուժութեամբ թռաւ ոտքի,

խից որդուց նամակը, որ սա բռնած ունէր իւր ձեռքում: Նամուացաւ, որ ինքը կարդալ չը գիտէր:

— Եւստորա, հողիս միջահանիր, կարգաւ, — գոչեց նա, նամակը վերադարձնելով որդուն:

— Կարգաց: Նամակը գրած էր Քրիստոսի տիրոջ կողմից: Նա յայտնում էր, թէ Քրիստոսը արդէն ազատութիւն է ըստացել և իսկոյն ուղարկել հայրենիք և թէ շուտով, երևի, տեղ կը հասնի:

Ճիշտ է արդեօք: Մի գուցէ գրողը մի չար թշնամի է, որ կամեցել է մի դառըն կատակ խաղալ, մի գուցէ ազատութիւն, բառը մի այլ, խորհրդաւոր նշանակութեամբ է գործածված նամակի մէջ:

Իսկ Աստղած լսել էր Անթառամի աղերսանքը. նա չը պիտի մեռնէր, մինչև որ անտէր իւր որդուն: Չանցաւ նամակ ստանալու օրից մի շաբաթ, Միխաբը մի օր դարձեալ տուն վազեց շնչասպառ, և այս-

անգամ ձեռքումը մի հեռագիր... Քրիստոսից: Համառօտ խօսքերով նա յայտնում էր, թէ հասել է Ն... նահանգական քաղաքը և, ամենաշատը, մի ցամախ լետոյ կը լինի իւր ծննդավայրում:

— Մի ամիս, մի ամիս, չը մեռնեմ ու տեսնեմ, չը մեռնեմ ու տեսնեմ . . .

Այդ խօսքերը կրկնելով, Անթառամը այն գիշեր համարեա մինչև լոյս չը կարողացաւ քնել, այնքան նա յուզված էր ուրախութիւնից: Ինչպէս, միթէ արդարև անտանուհինգ տարուց լետոյ նա կրկին պիտի գտնի իւր մեռած ու կորած որդուն:

Օրը կիրակի էր: Անթառամի որդիները, Միխաբը և Սէլրանը, ճաշից լետոյ գնացել էին քաղաքի շրջակայքում գրօսնելու: Նա նստած էր միայնակ թախտի վրայ, պատուհանի առջև, և ձեռները կրծքին դարսած իւր մտայն ու անորոշ

Հայեացքը յառել էր երկնքի հեռաւոր հորիզոնին, ուսկից նա, կարծես, մի բանի սպասում էր: ... Նա մի քանի ըոպէ առաջ դարձեալ Հմայել էր քառասուն և երկու սիսեռներէ վրայ, և երեք կարգի բաժանուած սիսեռների միջին կարգը դուրս էր եկել շորս, երկու մէկ, մէկ իրարու ետեւից, որ ասել է՝ ճսնսպարս:

— Չը մեռնեմ, մի սուգամ էլ տեսնեմ, չը մեռնեմ, մի անգամ էլ տեսնեմ, — արտասանում էին դարձեալ նրա ցամաքած շրթունքները:

Այն ինչ՝ նրա անորոշ Հայեացքը շարունակ յառած էր երկնքի հորիզոնին, ուր փոքր առ փոքր բարձրանում էին ամառային բամբակագոյն ամպերի կոյտերը և գիզվում միմեանց վրայ: Անդադար շարժելով, այդ ամպերը զանազան ձևեր էին ընդունում, մերթ բարձրագագաթ լեռների, մերթ հրեշաւոր կենդանիների: Եթէ քառասուն ու երկու սիսեռների գու-

շակուլթիւնը պիտի կատարվի, թող ամպերն էլ գուշակեն, թող նրանց բազմաթիւ կոյտերից մինը մի կառքի ձև, մի ձիու կամ մի ուղտի կերպարանք ներկայացնի, այն ժամանակ Անթառամը կիմանայ, որ ճսնսպարսը դողարկ չէ: Եւ ահա, հազիւ օրնահաւատ կնոջ մտքով անցել էր այս խորհրդաւոր ցանկութիւնը, երբ կապագոյն հորիզոնի վրայ ձգվեց մի սպիտակ գիծ, այնուհետև նա ծռվեց այս կողմ, այն կողմ, և պատկերացաւ... մի հսկայական ձիւնագոյն թափանցիկ ձի... քուլաքուլա ամպերից: Անթառամի սիրտը ըսկեսց ուժգին բաբախել. կարելի բան է, որ այդ բոլոր գուշակութիւնները սպարդիւն մնան:

Մի ամբողջ ժամ նա այս դրութեամբ անշարժ նստած էր, փոքր առ փոքր նրա ջղերին տիրեց թուլութիւն, և նա ընկղմուեց մի տեսակ թմրութեան մէջ: Երբեմն երբեմն նա ցնցուելով սթափվում էր, նայում էր այդ ու ձախ, սկանջ էր

դնում դէպի դուրս, և կրկին գլուխը թե-
քում կրծքին: Յանկարծ նա ուժգին ցնցվեց, վեր
ցատկեց տեղից և սկսեց դարձեալ ականջ
դնել: Նրան թւում էր, թէ լսում է ին-
չոր զանգակների թույլ հնչիւն, յետոյ ո-
չինչ չէ լսում, և տիրում է դարձեալ մի
և նոյն լուռութիւնը շրջակայքում: Բայց ոչ,
եթէ նրա ուղեղը խանգարած չէ, եթէ
նրա լսելիքը չէ խաբւում, արգարե լսվում
է փոստային կառքի զանգակների ձայնը,
և լսում է հետզհետէ աւելի պարզ և ու-
րոշ: Ահա նա, վերջապէս, բոլորովին մո-
տեցաւ, և կարծես հնչում է պատուհանի
տակ: Յանկարծ զանգակների ձայնին
խառնեց կառքի անիւնների դղրդիւնը,
խուլ փողոցը աղմկեց մի քանի վայրկեան,
և ամեն ինչ դարձեալ լռեց: Անթառամի ոտները,
ներքին մշուշ-
մուռնից, սկսիցին դողալ: Նա վազեց դուրս,
որքան կարող էր շտապով, ցած եկաւ
փոքրիկ սանդուղքով, ձեռներով ծնկները

բռնած: Գաւթի մէջ տեղում կանգնած
էր մի անծանօթ մարդ և կասկածանքով
նայում էր դէս ու դէն: Գրգռուած
ձայնը սրտը գցեց փոստային ձայնի
մտախոյզան մէջ: Կոտորելի դա սխալմա

Այդ մարդը հագած ունէր սևագոյն
և կոպիտ մահուդից ռուսական ձեով կա-
րած կապալի նման մի կարճ բան, հաստ-
րակ զինուորականի կօշիկներ՝ երկար ան-
կարուրդով և կոշտ կտաւից կարած լացն
վարդիկ: Նա գլխին դրած ունէր սպիտակ
ոչխարենուց կարած բոլորակ գդակ, որի
բաւական երկար մազերը ծածկել էին նը-
րա ճակատը ամբողջովին:

Այդ մարդը նիհար էր, կուրծքը ճըն-
շուած, ներս ընկած, մէջքը կորացած, մի
ուսը միւսից նկատելի կերպով բարձր, ե-
րեսը խորշոմած, միտքը զգզգուած, աչ-
քերը խորն ընկած, այտերը, ծնօտը և
կոկորդի ոսկորը նիհարութիւնից դուրս
ցցուած: Նրա ձեռները ոսկորոտ էին,

կոշտ և պինդ, ինչպէս որմնաղբի կամ տարին տասներկու ամիս քար կրող մշակի ձեռները, կապոյտ ջղերը որոշ դժաւորփած երկաթագոյն և կուչկուչփած կաշուի տակից, մատների լողերը դուրս ցցփած, այնպէս, որ լիշեցնում էին մոխրախառն կրակի մէջ խորոված շագանակներ:

Նրա ոտները ներքևի կողմից երևում էին ծուռ, և երբ նա իւր ձեռնափայտի վրայ լեներելով մի քանի քալլ առաջ եկաւ, նշմարվեց որ կաղում է փոքր ինչկարելի էր կարծել, որ նրա ոտների ոլոգները իրանց տեղումը չեն, կամ զարշապարները ուռած են: Անախորժ վերին աստիճանի անախորժ և, միևնոյն ժամանակ, կասկածաւոր և երկիւղալի տպաւորութիւն էր գործում այդ մարդու ամբողջ կերպարանքը առաջին հալեաքից: Նրան տեսնողը և կը խզճար, կը սարսափէր ակամայ, իսկ եթէ լսէր, որ ողորմութիւն է ազերսում, կմերժէր կամ եթէ ողորմել կամենար՝ չէր

մօտենալ նրան, հեռուից կը ձգէր փողը և կը հեռանար: Անթաւամբ շտապելով և հագիւ հագիւր դողդոջուն քայլերը փոխելով, անցաւ այդ մարդու մօտով, առանց ուշադրութիւն դարձնելու նրա վրայ:

Անծանօթը խորը խորշերի մէջ թաղփած իւր աչքերով ոտից ցլուլու չափեց նրան ուշադրութեամբ: Տարօրինակ և զարմանալի էր այդ աչքերի արտայայտութիւնը: Կարծես, նրանք վաղուց գրկվել էին կենդանութիւնից, կարծես, նրանց խոշոր բիբերը անշարժ էին, սպիտակ շըջանակները սառած, հողագոյն կոպերը քարացած:

Նա նայեց Անթաւամի ետևից, նայեց աջ ու ձախ, հաստաբուն թթենիին, տան փոքրիկ փայտեայ պատշգամբին, կիսաւեր շրջապարսպին և գլուխը երկմտօրէն շարժեց: Թւում էր, որ նա տարանման մէջ է. չը գիտէ ինչ անէ, խօսէ, թէ լռէ, առաջ զնայ, թէ լստ

դառնայ, բարկանայ, թէ մտւորախանայ:

Այն ինչ Անթառամը հասաւ գրտի դռներին, նայեց դէպի փողոց և կրկին շփոթված լետ դարձաւ: Այս անգամ նա նկատեց անձանոթին և, չը մօտենալով նրան, լուզված ձայնով հարցրեց: — Գո՞ւ ես կառապանը: Կա՞նք մենք:

Անձանոթը լուռ էր:

— Կառապանը դո՞ւ ես: Կա՞նք մենք:

Անձանոթը լուռ էր:

— Բաս ինչո՞ւ կանգնեց մեր դռների մօտ... Ուրի՞շ է եկողը... Նա չ'եկա՞ւ...:

Անձանոթը փայտի օգնութեամբ մի քայլ առաջ դրեց: Նա դարձեալ լուռ էր և միայն իւր կիսակենդան և երկմիտ հալեացքը չէր հեռացնում Անթառամի երեսից:

— Ողորմած Աստուած, ինչո՞ւ ես ինձ ծաղր անում, — գոչեց Անթառամը դառնութեամբ, — ես սպասում եմ... Ձէ, կանգնիր, այ մարդ, դու ո՞վ ես... Տէր Աստուած... աւազակ... Ի՞նչ ես ուզում ինձանից... Կամ քեզ համար ինչ-որ բան:

Այստեղ անձանոթը երկու ձեռները յենեց փայտի վրայ, մէջքը քիչ թեքեց և հառաչելով արտասանեց հետեւեալ խօսքերը:

— Կատարվեց ասածս... ոչ ես ճանաչեցի, ոչ նա է ճանաչում . . .

Անթառամը սարսափած և անգիտակցաբար լետ կանգնեց: Այդ մարդու ձայնը նրա հոգու խորքում զարթեցրեց վաղուց, շատ վաղուց, թմրած մի բան: Մի թույլ լիշողութիւն լուսաւորվեց նրա մէջ: Այդ նրա տասնութ տարի առաջ մեռած և մոռացված ամուսնու ձայնն է, այն, իսկ և իսկ այն թույլ, խեղճ, ողորմելի ձայնը, միայն աւելի տկար: Բայց ի՞նչպէս, կարելի՞ բան է, որ մեռելը վեր կենայ տասնութ տարուայ զերեզմանի խորքից: Միթէ նա երազումն է, կամ գուցէ ցնորվել է:

— Ես Գրիգորն եմ... ճանաչեցի՞ր...

ձե՞շտ լսեցին արդեօք Անթառամի ականջները, թէ դարձեալ շարունակվում

է նրա զառանցանքը: Սակայն նա կարող է երազում լինել, կարող է անգամ ցնորված լինել, բայց որ չը ճանաչի իւր Գրիգորին, որ կարողանայ մազու չափ խարվել նրան տեսնելիս, զա անկարելի բան է: Եւ ոչ միայն նա, այլ և ամենքը, որ մի անգամ տեսնել են նրա գեղեցկադէմ, նրբակազմ որդուն, միթէ երբ և իցէ կարող են չը ճանաչել թէկուզ տասնուհինգ տարուց յետոյ:

Ինչպէս քնից նոր զարթնածը, նա շփեց ձեռներով աչքերը, որ աւելի պարզ դիտէ իւր առջև կանգնած տարօրինակ անձնաւորութիւնը: Եւ կար մի անխուսափելի, մի անբաժան երևույթ, որ խանգարում էր նրան տեսնել իսկութիւնը:

Դա Գրիգորի, նախկին Գրիգորի, սիրուն կերպարանքն էր, այնպէս, ինչպէս տպաւորվել էր նրա լիշողութեան մէջ: Սա է ահաւասիկ Անթառամի իսկական որդին, այս սիրուն պատկերը, որ տասնուհինգ տարի շարունակ վառ պահել է նը-

րա երևակայութիւնը, որ ձուլվել ու միացել է նրա հոգու հետ, որ գիշերը խլել է նրա քունը, ցերեկը հանգստութիւնը: Եւ յանկարծ այդ միւսը, այդ աւազականման տգեղ, այլակերպ անձանօթը յանդգնում է . . .

Դա մի օգերևույթ է . . .
 — Եթէ իմանալի, որ մայրս էլ է ինձ մոռացել, Սիբիրը ինձ համար լաւ էր . . .

Բնական և խորին թախծութեամբ արտասանված այս պարզ բողոքը յանկարծ սթափեցրեց մոլորված կնոջը: Քողը ընկաւ նրա աչքերից, խաբուսիկ պատկերը չքացաւ, դառն իրականութիւնն ամենայն մերկութեամբ երևան եկաւ մինչև այդ վարկեան ցնորը համարված այլանդակ էակի կերպարանքով:

Նա ճանաչեց իւր որդուն, ճանաչեց նրա ձայնը, նրա աչքերը: Նրա ոտները թուլացան հարուածը անսպասելի էր և սաստիկ: Նրա գլուխը պտտեց, աչքերը մթնեցին, գուցէ նա տեղն ու տեղը գե-

տինը ընկնէր, եթէ որդու նիհար, ոսկորոտ ձեռները նոյն վայրկեանին չը գրկէին նրան:

Այս ամբողջ տեսարանը կատարվեց մի քանի վայրկեանում միայն:


Երբ որդին աջ կուռը վերցրեց մօր ուսից, նրա կապալի թևը մի փոքր յետ քաշվեց: Երևեցաւ նրա բազուկը, որի վրայ երկաթէ կապանքը անջնջելի կերպով դրօշմել էր իւր կոշտ հետքը, սև և լայն ապարանջանի ձևով:

— Հիմայ ճանաչում ես, — ասաց նա, պարզելով իւր բազուկը Անթառամի աչքի առջև:

Այդ բազուկի վրայ կար ծննդեան մի մեծ և բոլորակ խալ:

Անթառամը բաց թողեց որդուն իւր գրկից, նայեց նրա ոտից մինչև գլուխ աղճատված կերպարանքին, ձեռները բարձրացրեց վեր և իւր արեգարդ գլխին մի ուժգին հարուած տալով, գոչեց դառն ձայնով.

— Երանի մեռնէի եւ քեզ չը տեսնէի . . .



Գինն է 7 կողեկ:

891.542

Շ-66

15244

2013

